զգացն իր սիրտն՝ որ գրեթէ ակամայ իր բաղկաց մէջ առաւ աղջիկն. որ այս մայրենի սիրոյն առաջին նշանն տեսնելով՝ սիրտն ելաւ ու ըսաւ. «Ահ, տիկին, երանի ինձ»։

— Տիկին. պատասխանեց մարքիզուհին լալով. մի թէ ես քու մայրդ չեմ։

— Այո, այո, մայր իմ, մայր բարեգութ՝ որ բոլոր կենացս մէջ ունեցած սիրոյս միաւուր մէջ հատուցումն առնես։ Ո՜հ Աստուած իմ, ասաց աչքն ու ձեռքն դէպ 'ի երկինք վերցնելով. դու ողորմեցար իմ վրաս ու աղաչանքս լսեցիր. շնորհակալ եմ։

Նոյն ատեն Ֆորթոն գրան սեմին վրայ երեւցաւ, և իրեն համար այս նոր տեսարանս տեսնելով կանգուն կեցած կը դիտէր՝ իւր աչաց չհաւատալով. Տիկին Սէնթ-Անժ ալ իւր նախկին սովորութեննէն յաղթահարեալ և գրեթէ ամաչելով մայրական զգացման վրայ որ իւր նախապաշարմանց կը յաղթէր՝ շուտով ինքզինքը ժողվեց և դէմքն խստացուց։ Աննա իւր մօր սրտէն անցածն իմանալով՝ գնաց պատուհանի մի առջին իւր արտասուքն ծածկելու. բայց շատ հեռու չգնաց՝ որպէս զի Ֆորթոնի ասացածներն լսէ. որովհետեւ չէր տարակուսեր որ հօրն վրայ լուրեր բերած պիտի լինէր, և որչափ ալ չէր սիրեր այն մարդէն՝ բայց մտադիր ականջ կը դնէր խօսածներուն, որ մարքիզուհւոյն մօտենալով՝ ըսաւ. «Մինչև ցայժմ պարապ տեղ բնտռեցի, Տիկին, մարքէզին ծածկուած տեղն գտնելու. ծածկուած տեղն ասեմ, վասն զի տարակոյս չունիմ որ նա ողջ է տակաւին. սոյդ տեղէ լսեցի որ երեկ ժամն ութին արեւ մարն մտած ատեն՝ Փարիզու հիւսիսակողման դռներէն երեք հոգի դուրս են ելեր. մին 'ի նոցանէ հոն տեղ պատրաստ գտուած կառք մի հեծնելով շուտով քաղքէն հեռացեր է. իսկ իրեն հետ եկող միւս երկուքն նորէն Փարիզ մտեր են. ինձ խօսք տուին որ այս երկու մարդիկն ինչ ալ լինի պիտի գտնեն։ Իսկ հրամանատարին հանդիպած դժբաղդութեան վրայ տարակոյս չկայ. սակայն կ'երեւի թէ առաջուց իր բաներն կարգի դրած է եղեր, և ընդհանուր հրիտակատար մի ալ կարգեր է»։

— Ի՛նչ, ընդհանուր հրիտակատա՛ր, կանչեց մարքիզուհին զարմացմամբ։

— Այո՛, տիկին, պատասխանեց Ֆորթոն, և շատ յոյսեր պարապի պիտի ելնեն՝ ասաց բարկութեննէն խղդուկ և խիստ ձայնով մի. անշուշտ սակաւ ժամանակէն պիտի լսէք այն երջանիկ անձին անունն որ տարին քառասուն հազար ֆրանք եկամուտի տէր պիտի լինի։ Երբ այս առտու ձեր հօրեղբօր տունն գնացի՝ տեսի որ նոտար մի նստած երկայն բարակ ցուցակ մի կը գրէր տան մէջ եղածներուն. և կ'երեւի թէ այս անսովոր զգուշութիւնս ձեր հաւատարիմ Տիւպուային հնարքն եղած է, որպէս թէ Սէնթ-Անժի մարքիզուհին հանգուցելոյն սանն՝ իւր հօրեղբօր ստացուածոց ժառանգ լինելու համար՝ նոտարի կարօտութիւն ունէր, որոց վրայ արդէն բնութիւնն անհերքելի իրաւունք տուած է իրեն։ Ուստի շատ երախտապարտ պէտք է լինիք, տիկին, այդ հաւատարիմ Տիւպուային, ասաց՝ ծերունի ծառային անունն շեշտելով։ Եմիլին որ հարցնէք՝ կարծեմ թէ այսօր զձեզ տեսնելու չէ կարող գալ. խեղճն սարսափէն ու անհանգստութեննէն հիւանդացաւ, ասաց վեր 'ի վերոյ կերպով մի, և ձգեց գնաց։

Տը Մառլէս — Կը շարունակուի։

---

## Գուշնուզեան առածք։

«Հեծեալ մը միայն փոշի չի հաներ», և կը նշանակէ որ մարդու մը միայն աշխատութիւնը շատ մեծ չի կրնար ըլլալ։

«Կարկատեալ հողաթափ մ'երեսէ թողած մորուքէ մ'աւելի կ'արժէ», կը նշանակէ որ երբեմն կին մը մարդէ մ'աւելի արժէք ունի։

«Ի՞նչ կը պակսի քեզի, ով չնչին մարդ. ադամանդներով մատանի՞ մը», կը նշանակէ. Եթէ հարուստ ես, յիմարք քեզի մեծ յարգ կու տան։

«Նա իր սափրչին չի կրնար հատուցանել պարզ մօրուքի մը համար, և իրեն հարստութեան վկաներ կը փնտռէ», կը պատշաճի աղքատացեալ մարդու մը որ մեծ գործեր կը ջանայ ընելու։

«Իր որդին կը փնտռէ մինչդեռ ուսոցը վրայ կը կրէ զայն», կ'ըսուի մտացրուի մը համար։

«Եկաւ իր կինը գրկելու, և անոր աչուըները հանեց», կը նշանակէ. Աշխարհիս լաւագոյն դիտաւորութիւններով շատ անգամ չարիք կ'ըլլայ։

«Անտառը միայն իրեն ծառերովը կ'այրի»։

«Եթէ բերանը փակ պահուի, ճանճք չեն մտներ հոն». այս առածը կը խրատէ խոհականութիւն։

«Ինքն եկաւ օգնելու քեզի հօրդ գերեզմանը փորելու համար, և փախաւ քու բրիչովդ», կը նշանակէ. Մի վստահիր անոնց որոնց ծառայութիւնքն շահախնդիրք են։

«Ոտքը կ'երթայ ուր որ սիրտը զայն կը տանի»։

«Եղիր առիւծ, և կեր զիս, այլ մի ըլլար գայլ զիս աղտեղելու համար»։

«Եթէ հրաւիրուիս էշն 'ի հարսանիս, փայտ բերել տալու համար է»։

«Քու համբաւոյդ համար աշխատէ մինչև որ անուն մ'ունենաս, ապա ինքը կ'աշխատի քեզի համար»։

«Ամենայն տեսակ իրեն տեսակին համար բարի է»։

«Խօսքն իրեն ժամանակին ներուած է»։

«Իրեն ստացուածքը յարգ և գամ եղան», կը ցուցնէ շռայլ մը։

«Ինքը գնաց 'ի ծով և զայն ցամաք գտաւ», կը նշանակէ որ ով որ առանց սրտոտութեան կը քալէ, աղէկ կ'ընէ որ տո դառնայ, վասն զի իրեն գործոցը մէջ պիտի չի յաջողի։

«Ինքն իրեն հայրենական պարտիզին պտուղները կ'ուտէ, և կ'անարգէ իր նախնիքը», կը նշանակէ. Մի ըլլաք ապերախտք։

digitised by A.R.A.R.@